ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ
(Վահան Բայբուրդյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Բոլորեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահան Առաքելի Բայբուրդյանի կյանքի 75-ամյակը: Հիրավի, տաղանդավոր գիտնականի անցած ուղին հայ արևելագիտական ու քաղաքական մտքին, հարազատ ժողովրդի պատմությանը, նրա հոգևոր արժեքներին ու մշակույթին բոլորանվեր ծառայելու փայլուն և ուսանելի օրինակ է:

Վ. Բայբուրդյանը ծնվել է 1933 թ. Ախլցխայում: Նա պատկանում է հայ արևելագետների այն սերնդին, որը կանգնած էր 1950-ական թվականներին ձևավորված հայ արևելագիտության ակունքների մոտ: Նա գիտական ու կազմակերպչական ծանրակշիռ ներդրում է ունեցել հայ իրականության մեջ առաջին ակադեմիական կենտրոնի՝ Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հաստատման ու զարգացման գործում:

Շնորհիվ իր բնական ձիրքի, լայնախոհության, վերլուծական մտածողության, աշխատասիրության և լեզուների փայլուն իմացության, Վ. Բայբուրդյանն անգնահատելի դեր խաղաց հայ իրանագիտության ձևավորման, նրա հիմնական ուղղությունների սահմանման, իսկ ամենակարևորը հայ իրանագիտությունը սիրողական մակարդակից գիտական մակարդակի բարձրացնելու գործում: Դա նրան գիտական շրջաններում բերեց մեծ ճանաչում և այսօր նա, իրավամբ, հայ իրանագիտության անվիճելի առաջատարն է, որի գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունները լայնորեն հայտնի են նաև Հայաստանից դուրս:

Մայր բուհը՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո, Վ. Բայբուրդյանն իր ասպիրանտական ուսումնառությունն անցել է համաշխարհային հռչակ վայելող արևելագիտական կենտրոններից մեկում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա, 1962–1965 թթ.): Այստեղ նա ձեռք է բերել հիմնավոր գիտելիքներ և իրանագիտական-արևելագիտական փայլուն պատրաստություն: Մոսկվայում իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո՝ 1965-ին՝ Վ. Բայբուրդյանը վերադառնում է Երևան ու երկար տարիներ հետազոտական աշխատանք կատարում Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում:

Չափազանց ընդգրկուն և լայն է Վ. Բայբուրդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը. Իրանի և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմություն, հայագիտություն, մասնավորապես հայ ժողովրդի և Հայկական հարցի պատմություն, հայ գաղթօջախների պատմություն, հայ առևտրական կապիտալի պատմություն, հայ-իրանական պատմական և միջպետական հարաբերություններ, քրդագիտություն, հայ-քրդական հարաբերություններ, միջազգային հարաբերություններ, քաղաքականություն և այլն: Առհասարակ, Վ. Բայբուրդյանը համակողմանի պատրաստություն ունեցող, համաշխարհային պատմությանը քաջատեղյակ պատմաբան է: Նա նաև բեղմնավոր գրչի տեր գիտնական է: Նրա գիտական հետազոտություններն ամփոփված են Հայաստանում և արտասահմանում տարբեր լեզուներով հրատարակված մի շարք մեծածավալ մենագրություններում և բազմաթիվ հոդվածներում, որոնք նրան բերել են միջազգային ճանաչում:

Վ. Բայբուրդյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում ի սկզբանե գտնվել է Իրանի հայ գաղթօջախների պատմությունը, մի պրոբլեմ, որը նույնքան իրանագիտական է, որքան և հայագիտական: 1969 թ. ռուսերեն լույս տեսավ նրա «Նոր Ջուղայի հայ գաղթօջախը XVII դարում (Նոր Ջուղայի դերը իրանաեվրոպական քաղաքական և տնտեսական հարաբերություններում)» մենագրությունը, որը նրան բերեց Իրանի հայ գաղթավայրերի հմուտ գիտակի համբավ: Պատահական չէ, որ Վ. Բայբուրդյանին վստահվեց շարադրելու «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի (1972 թ.) և Հայկական սովետական հանրագիտարանի Նոր Ջուղային և Իրանի հայ գաղթօջախներին նվիրված բաժինները: Ավելի ուշ, վերստին անդրադառնալով Իրանի հայ գաղթօջախների պրոբլեմին, Վ. Բայբուրդյանը 2007 թ. հրատարակեց «Նոր Ջուղա» մենագրությունը: Նշված աշխատություններում և այդ նույն հարցին նվիրված բազմաթիվ հոդվածներում Վ. Բայբուրդյանը բացահայտում է Իրանի հայ գաղթօջախների խաղացած դերը հայ քաղաքական մտքի ձևավորման ու ազգային-ազատագրական գաղափարների վերելքի գործում, համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ ուշ միջնադարում և պատմության նոր դարաշրջանում հայերն իրենց կարևոր ավանդն են ունեցել Արևելքի ու Արևմուտքի քաղաքակրթությունների և մշակույթների շփման գործում: Զարգացվում է նաև այն թեզը, որ պատմական ճակատագրի բերումով ապրելով օտար միջավայրում, իրանահայությունը կարևոր դեր է խաղացել մայր հայրենիքի տնտեսական ու քաղաքական կյանքում, իսկ Նոր Ջուղան ամբողջ XVII դարի ընթացքում եղել է հայ մտավոր և տնտեսական կյանքի ամենաաչքի ընկնող կենտրոնը:

Վ. Բայբուրդյանի գիտական հետաքրքրությունների մշտական առարկան է հանդիսացել նաև հայ առևտրական կապիտալի պատմությունը: Ինչպես հայտնի է, XVI դարում վերստին պատմության թատերաբեմ է բարձրանում միջազգային առևտրով զբաղվող հայ «խոջայական» դասը, որի գործունեությունը միառժամանակ խամրել էր Առաջավոր Ասիայում տեղի ունեցած քաղաքական վայրիվերումների, առևտրական ճանապարհների անապահովության և մի շարք այլ պատճառներով: Հայ վաճառականները ընդհուպ մինչև XVIII դ. կեսե-

ը դառնում են Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրի միջնորդներ՝ մրցակիցներ չունենալով հատկապես ցամաքային քարավանային առևտրի բնագավառում:

Նշված թեմայով Վ. Բայբուրդյանը հրատարակել է մի շարք մեծարժեք ուսումնասիրություններ: Դեռևս 1960-ական թվականներին այդ խնդրի վերաբերյալ նա Մոսկվայում և Երևանում մի շարք հոդվածներ է հրապարակել, իսկ 1996 թ. Թեհրանում հայերեն հրատարակվում է նրա «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում» մեծածավալ մենագրությունը, որն անմիջապես թարգմանվում է պարսկերեն և նույն թվականին լույս տեսնում Թեհրանում: Ավելի ուշ, 2004 թ. Նյու Դելիում անգլերեն հրատարակվում է «Միջազգային առևտուրը և հայ վաճառականները XVII դարում» խիստ ուշագրավ մենագրությունը. ի դեպ, այս աշխատությունը արտասահմանում հրատարակած գրախոսականներում (անվանի պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի և այլոց կողմից) բարձր գնահատականի է արժանանում:

Վ. Բայբուրդյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում են եղել նոր և նորագույն դարաշրջանի Մերձավոր ու Միջին Արևելքի միջազգային հարաբերությունների ամենաբազմապիսի խնդիրները, որոնց վերաբերյալ հրատարակել է մեծ թվով ուսումնասիրություններ: Նա առաջինն էր, որ համակողմանի քննության է ենթարկել XX դարասկզբի թուրք-իրանական հարաբերությունները՝ բացահայտելով Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանում այդ երկու առաջատար պետությունների միջպետական հարաբերությունների ներքին զսպանակները: Այդ պրոբլեմի կապակցությամբ նրա հրատարակած «Թուրք-իրանական հարաբերությունները 1900–1914 թթ.» ծավալուն մենագրությունն (1974 թ.) իր բնույթով եզակի ուսումնասիրություն է, որը նա ներկայացրել է որպես դոկտորական ատենախոսություն և հաջողությամբ պաշտպանել 1975 թ.: Գիտական շրջաններում չափազանց մեծ է եղել հետաքրքրությունն այդ մենագրության նկատմամբ: Ուստի պատահական չէ, որ այն թարգմանվել է պարսկերեն և «Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ XX դարի սկզբներին» վերնագրով 1989 թ. լույս է տեսել Սպահանում՝ համառոտագրված տարբերակով: Միաժամանակ աշխատության առանձին բաժիններ լույս են տեսել Ստամբուլի մամուլում՝ թուրքերեն:

Վ. Բայբուրդյանն ուշագրավ ուսումնասիրություն է կատարել նաև 1821–1823 թթ. թուրք-իրանական պատերազմի վերաբերյալ, որի ընթացքում Իրանին հաջողվեց ժամանակավորապես գրավել Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը: Նրա ուշադրությունից դուրս չի մնացել նաև թուրք-իրանական հարաբերությունները պատմության նորագույն շրջանում: Վ. Բայբուրդյանի գրչին են պատկանում նաև Հայաստանում և արտասահմանում հրատարակված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք նվիրված են ուշ միջնադարում հայերի դիվանագիտական բանավարություններին՝ իրանա-եվրոպական հակաթուրքական ռազմաքաղաքական դաշինք կնքելու գործում:

Վ. Բայբուրդյանը հանդես է եկել նաև մի շարք ուշագրավ հետազոտություններով՝ նվիրված հայ-իրանական հարաբերություններին Հայաստանի անկա-

խության ձեռքբերումից հետո: Նա Իրանի քաղաքական պատմությանը նվիրված բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ է: Մասնավորապես, մեծ թվով հոդվածներ է նվիրել Իրանում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի վարած քաղաքականության հարցերին: 1984 թ. լույս տեսավ նրա «Իրանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին» մենագրական ուսումնասիրությունը: Իսկ 1999 թ. հրատարակվեց «Իրանն այսօր» ծավալուն աշխատությունը, որտեղ համակողմանիորեն լուսաբանվում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական, տնտեսական, ռազմական ու մշակութային կյանքի բազմապիսի խնդիրները:

Վ. Բայբուրդյանը հայ արևելագիտության պատմության մեջ առաջինը խիզախ մտածում ունեցավ նախաձեռնելու Իրանի ամբողջական պատմության ստեղծմանը: 2005 թ. լույս տեսավ նրա Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) մեծածավալ ու արժեքավոր աշխատությունը, որը շահել է «Հայ օգնության ֆոնդի» (ԱՄՆ) դրամաշնորհը: 2006 թ. լույս տեսավ այդ աշխատության երկրորդ լրամշակված հրատարակությունը:

Լինելով լայն մտահորիզոնի պատմաբան՝ Վ. Բայբուրդյանը հեղինակ է նաև Թուրքիայի պատմությանը, Հայկական հարցին, արևմտահայոց ցեղասպանությանը, հայ ժողովրդի պատմության այլևայլ հարցերին նվիրված ուսումնասիրությունների: Նրա գիտական պրպտումների առարկա է հանդիսացել նաև քաղաքական իսլամագիտությունը, մասնավորապես իսլամական գործոնը Մերձավոր ու Միջին Արևելքի արդի միջազգային հարաբերություններում: Նա նաև հայ արևելագիտության, հատկապես իրանագիտության պատմությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ է:

Վ. Բայբուրդյանը միաժամանակ քուրդ ժողովրդի պատմության և հատկապես հայ-քրդական հարաբերությունների բնագավառում ճանաչված մասնագետ է: Նրա քրդագիտական հետաքրքրությունները ներկայացված են բազմաթիվ ուշագրավ հոդվածներով և երկու մեծածավալ մենագրություններով՝ «Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին» (Երևան, 1989 թ.) և «Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո» (Երևան, 2008 թ.): Դրանք միաժամանակ հայագիտական բնույթի ուսումնասիրություններ են: Դրանցում քննարկման է ենթարկվում Օսմանյան կայսրության, իսկ ապա հանրապետական Թուրքիայի կազմում բնակչության մի ստվար զանգված կազմած քուրդ ժողովրդի քաղաքական և տնտեսական պատմության դրվագները, հայ-քրդական հարաբերությունների զարգացումները, դրանց վերելքներն ու վայրէջքները: Համակողմանի քննարկվում են հայկական ու քրդական հարցերի արծարծումները միջազգային դիվանագիտության ատյաններում, ինչպես նաև երկու դրացի ժողովուրդների քաղաքական պատմության աղերսները վերջին մի քանի դարերի ընթացքում: Դժվար է գերագնահատել այդ աշխատությունների գիտական և քաղաքական կարևորությունը հայ-քրդական հարաբերությունների բնույթն ու ընթացքը հասկանալու և բացատրելու տեսանկյունից, այդ թվում՝ ապագա զարգացումների առումով:

Վ. Բայբուրդյանը արևելագիտական, հայագիտական, միջազգային հարաբերություններին վերաբերող զգալի թվով հրատարակություններ է գրախոսել, խմբագրել և նպաստել դրանց հրատարակությանը: Նա բազմիցս մասնակցել և զեկուցումներով հանդես է եկել արևելագիտական ու հայագիտական միջազգային գիտաժողովներում:

Վ. Բայբուրդյանը բազմակողմանի հետաքրքրությունների տեր գիտնական լինելուց բացի, նաև գիտության ու կրթության հմուտ կազմակերպիչ է. երկար տարիներ նա Հայաստանի գիտությունների ակադեմիայում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանում, Երևանի պետական համալսարանում և Հր. Աճառյան համալսարանում զբաղվել է գիտության ու կրթության բնագավառի կազմակերպչական աշխատանքներով: Մասնավորապես եղել է ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտնական-քարտուղարը, Իրանի բաժնի վարիչը, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնի վարիչը, նույն ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, ռեկտորի պաշտոնակատարը, Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչը, Հր. Աճառյան համալսարանի արևելագիտության և ռոմանագերմանական ֆակուլտետի դեկանն ու նույն համալսարանի արևելագիտության ամբիոնի վարիչը: Նա նաև բեղուն մանկավարժ է. Երևանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում զբաղվել է մանկավարժական-դասախոսական գործունեությամբ: Չափազանց ծավալուն ու լայն է նաև նրա դասախոսական աշխատանքի առարկաների շրջանակը. Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմություն, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Հայ դիվանագիտության պատմություն, Իսլամական գործոնը արդի միջազգային հարաբերություններում, իսլամագիտություն, ժամանակակից Արևելքի խնդիրները, Իրանի երկրագիտություն և այլն: Նշանակալի է նաև Վ. Բայբուրդյանի ներդրումն արևելագիտական և միջազգայնագետ կադրերի պատրաստման բնագավառում: Նրա հմուտ ղեկավարությամբ բազմաթիվ ասպիրանտներ և հայցորդներ պաշտպանել են գիտական թեզեր: Նա ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող «Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի խմբագրական կազմի անդամ է, ինստիտուտի «Համաշխարհային պատմություն» մասնագիտության գծով թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի նախագահի տեղակալն է, նաև մեր հանրապետության տարբեր գիտական կենտրոնների և ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների անդամ:

1992 թ. Վ. Բայբուրդյանի կյանքում սկսվում է գործունեության մի նոր շրջան. նա հրավիրվում է դիվանագիտական աշխատանքի և նշանակվում Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, անկախ Հայաստանի առաջին դեսպանը այդ երկրում: Սա այն դեպքն է, երբ դիվանագիտական առաքելությամբ

արտասահման էր ուղարկվում Արևելքը հիանալի իմացող, պրոֆեսիոնալ իրանագետ-արևելագետը: Ուժերի ծայրաստիճան լարումով, ներշնչումով, պատասխանատվության մեծ զգացմամբ, նվիրվածությամբ, իսկ ամենակարևորը մեծագույն արդյունավետությամբ է նա կատարել դիվանագետի իր առաքելությունը, որն ակնհայտորեն արտահայտվել է հայ-իրանական բազմաբնույթ հարաբերություններում: Վեց տարի անընդմեջ Իրանում վարելով դեսպանի պաշտոնը, Վ. Բայբուրդյանը մեծ նպաստ է բերել հայ-իրանական հարաբերությունների վերընթաց զարգացմանը: Այդ պատասխանատու պաշտոնում նա մշտապես դրսևորել է ոչ միայն գործնական-պրագմատիստական խառնվածք, այլև բնավորության ու վարքագծի մի շարք լավագույն հատկանիշներ՝ հայրենասիրություն, մեր հանրապետության շահերի խորը գիտակցում, գործի հիանալի իմացություն, մտքի ճկունություն, բարձր պրոֆեսիոնալիզմ և, վերջապես, լայն մտահորիզոն ու կուլտուրա: Վ. Բայբուրդյանին շնորհվել է արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

Իրանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտելուց հետո վերադառնալով հայրենիք, Վ. Բայբուրդյանը նշանակվել է ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական, սակայն իր ողջ գործունեությունը նվիրել գիտական ու դասախոսական աշխատանքներին:

Վ. Բայբուրդյանն այսօր էլ երիտասարդական եռանդով ու ավյունով ծառայում է իր հայրենիքին և ժողովրդին: Նրան բնորոշ է արտասովոր աշխատունակությունը և գիտական անխոնջ որոնումների ձգտումը: Նա նաև հայրենիքի հոգսերով ապրող քաղաքացի է: Նրա մարդկային նկարագրի բնորոշ հատկանիշներն են համեստությունը, դյուրահաղորդությունը, համագործակցության ոգին, խառնվածքի կայունությունը, բարյացակամությունն ու բարությունը, աշխատասիրությունը, գործին նվիրվածությունը, խոնարհ պարզությունը, անկեղծությունը, մի խոսքով՝ ազնիվ նկարագիրը:

Ուրեմն մաղթենք Վահան Բայբուրդյանին քաջառողջություն, բազում արևոտ տարիներ, մշտանորոգ կորով ու ազգանվեր նոր և մեծ իրագործումներ:

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ